

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին»  
 № 483-Ն որոշման № 1 հավելվածի 59-րդ կետով նախատեսված 2019 թվականի առաջին կիսամյակում  
 իրականացված միջոցառումների կատարման վերաբերյալ

NN ը/կ	Գործողությունը	Կատարման ընթացքը	Գործողության կատարման վերստուգելի չափանիշը	Պատասխանատու մարմինը և համակատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6	7
59	<p><b>Աբու Դաբիում (ԱՄԷ) անցկացված հատուկ օլիմպիադաների աշխարհի ամառային խաղերին մասնակցություն</b></p> <p><b>Խուլերի շախմատի Հայաստանի Հանրապետության 13-րդ առաջնության անցկացում</b></p>	<p>2019 թվականի մարտի 8-22-ը տեղի ունեցած հատուկ օլիմպիադաների աշխարհի ամառային խաղերին ՀՀ պատվիրակությունը (պատվիրակության կազմը՝ 6 հոգի) մասնակցել է պետական աջակցության շրջանակում տրամադրված միջոցներով: Ըստ կազմակերպության ներկայացրած հաշվետվության՝ միջոցառմանը մասնակցել են 190 երկրների մտավոր խնդիրներ ունեցող 7500 մարզիկներ, որոնք մրցել են 24 մարզաձևերում: Մեր մարզիկներն իրենց ուժերը չափել են լող և ատլետիկա մարզաձևերում:</p> <p>Անցկացվել է մայիսի 18-20-ը Երևան քաղաքի Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տանը: Ըստ կազմակերպության ներկայացրած հաշվետվության՝ առաջնության հաղթողներն են՝                      1-ին տեղ - Սարգիս Աթաբեկյան,                      ք. Վանաձոր,                      2-րդ տեղ - Հակոբ Հակոբյան,</p>	<p>Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը ներկայացված է եղել երկու մարզիկներով: Նվաճել են 3 մեդալ՝ 2 ոսկե, 1 բրոնզե: Գևորգ Մանուկյանը 100 մետր վազք մրցաձևում գրավել է 1-ին տեղը, հեռացատկ թափավազքով մրցաձևում՝ 3-րդ տեղը, իսկ Ռոբերտ Պետրոսյանը 50 մ թիկնալողում գրավել է 1-ին տեղը:</p> <p>Մասնակցել են Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի 5, Գեղարքունիքի մարզի 4, Կոտայքի մարզի 5, Արարատի և Արագածոտնի մարզերի 1 – ական և Երևան քաղաքի 8 խուլ շախմատիստներ, ընդամենը՝ 27 մարդ:</p>	<p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p> <p>«Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպություն</p> <p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p> <p>«Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպություն</p>	<p>2019 թ.</p> <p>2019 թ.</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p> <p>ՀՀ պետական բյուջե</p>

1	2	3	4	5	6	7
	<p><b>Հաշմանդամություն ունեցող անձանց հանրապետական մարզական 17-րդ փառատոնի անցկացում</b></p>	<p>ք. Երևան, 3-րդ տեղ - Սարո Մելքոնյան, ք. Երևան: Մրցանակային տեղեր գրաված մարզիկները պարգևատրվել են հավաստագրերով և դրամական մրցանակներով (1-ին տեղ՝ 30000 ՀՀ դրամ, 2-րդ տեղ՝ 20000 ՀՀ դրամ, 3-րդ տեղ՝ 15000 ՀՀ դրամ):</p> <p>Անցկացվել է հուլիսի 11-13-ը Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրում, որին մասնակցել են ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հաշմանդամություն ունեցող մարզիկներ: Մրցանակային տեղեր գրավածները պարգևատրվել են ոսկե, արծաթե և բրոնզե մեդալներով, հավաստագրերով և դրամական մրցանակներով (1-ին տեղ՝ 10000 ՀՀ դրամ, 2-րդ տեղ՝ 7000 ՀՀ դրամ, 3-րդ տեղ՝ 5000 ՀՀ դրամ):</p>	<p>65 մարզիկներ իրենց ուժերը չափել են 6 մարզաձևերում՝ սեղանի թենիս, սայլակներով բասկետբոլ, լող, բազկամարտ, պաուերլիֆտինգ և շախմատ:</p>	<p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p> <p>«Հայաստանի ազգային պարաօլիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպություն</p>	<p>2019 թ.</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p>
	<p><b>Հովանավորչական միջոցներով անցկացվող միջոցառումներ</b></p>	<p>Հունիսի 25-ին «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոնում անցկացվել է ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառում:</p>	<p>Վազք 30 մ, հեռացատկ տեղից և թենիսի գնդակի նետում մրցաձևերից անցկացված միջոցառմանը մասնակցել են մտավոր խնդիրներ ունեցող 50 սաներ:</p>	<p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p>	<p>2019 թ.</p>	<p>Ֆինանսական միջոցներ չեն պահանջվել</p>